## Հիսուսի հետևորդները

# Վանուատույում

# Ինչպես է Էմման հետևում Հիսուսին

Էմման հետևում է Հիսուս Քրիստոսին՝ լինելով բարի: Նա ցանկանում է բոլորի համար ընկեր լինել: Նա սիրում է խոսել մարդկանց հետ և խաղեր խաղալ այլ երեխաների հետ: «Ես սիրում եմ խաղալ ընկերներիս հետ և նրանց նվերներ տալ, քանի որ ինձ դուր են գալիս մարդիկ», - ասում է Էմման: Երբեմն նա բացիկներ է պատրաստում իր ընկերների և ընտանիքի համար:

Էմման նաև օգնում է իր մայրիկին՝ հոգ տանելով իր երկվորյակ մանուկ եղբայրներին: Նա օգնում է ճաշեր պատրաստել իր ընտանիքի համար և կերակրում է իր մանկիկ եղբայրներին իրենց շշերով: «Ես լավ եմ զգում և երջանիկ եմ, երբ օգնում եմ: Ես գիտեմ, որ Երկնային Հայրը կօրհնի ինձ»,- ասում է Էմման: ●

**Դուք նույնպես կարող եք հետևել Հիսուսին:**

Նշեք որևէ բան, որ դուք արել եք՝ Հիսուսին հետևելու համար: Գրեք և պատմեք մեզ: Դա անելու համար տես դարձերեսի շապիկը:

## Էմմայի մասին

**Տարիքը.** 10 տարեկան

**Վայրը.** Շեֆա, Վանուատու

**Լեզուներ.** անգլերեն, բիսլամա, ֆիջիերեն

**Նպատակներ.** 1) Գնալ միսիա: 2) Լինել օդաչու

**Հոբբիներ.** լող և կարառկե

**Ընտանիքը.** Էմման, մայրը, հայրը, մեկ քույր և երկու եղբայրներ:

## Ի՞նչ է սիրում Էմման

**Մորմոնի Գրքի պատմություն.** Լեքին և նրա ընտանիքը հեռանում են Երուսաղեմից (տես 1 Նեփի 2)

**Տոնական ավանդույթ.** Զատիկի համար ընկերներին քաղցրավենիք և բացիկներ նվիրելը

**Մրգեր և բանջարեղեն.** բանաններ, խնձորներ, նարինջներ, ձմերուկ, հազար և գազար

**Գույնը.** վարդագույն

**«Երեխաների Միության երգ.** «Ընտանիքները կարող են հավերժ միասին լինել», (*Մանկական երգարան*, 188)